

ԽԵԹԼ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱԹԱՅԻՆ ՂՆԴԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն. Ա. ՄԵՐՏՉՅԱՆ

Ը տարրերություն մեր այժմյան հնչյունական գրի, խեթական սեպագրության (և ընդհանրապես սեպագրության) համար ամենամեծ գովարությունը բառասկզբում երկու հաջորդական բաղաձայնների գրության հարցն էր, քանի որ սեպագրերը վանկանշաններ են՝ կաղաված հետևյալ երեք սկզբունքներով.

- 1) Զայնավոր+բաղաձայն, ինչպես՝ ab, ub, ib, ak, uk, ik, al, ul, il և այլն:
- 2) Բաղաձայն+ձայնավոր, ինչպես՝ ba, be, bu, ka, ki, ku, la, le, lu և այլն:
- 3) Բաղաձայն+ձայնավոր+բաղաձայն, ինչպես՝ kat, tar, har, kuš, šar և այլն:

Այս հասկանալի պատճառով էլ, երկու բաղաձայններով սկսվող բառերի գրությունը կարող էր տարրերվել նրանց արտասանությունից, որովհետև իրար հաջորդող բաղաձայնների միջև կամ նրանցից առաջ պիտի գրվեին նաև շարտասանվող ձայնավորները: Օրինակ, պատմական Եգիպտոսի Սուրբ անվանումը, որ սեմական լեզուներում և հայկական աղբյուրներում (նաև բաղաձայնով բարբառներում) արտասանվում է Սուր, խեթական արձանագրություններում վերահիշյալ պատճառներով դառնում է Սիգրի (Մի-իդ-րի կամ Մի-իձ-րի), Mi-iz-ri:

Բառասկզբին իրար հաջորդող բաղաձայնների գրության երկու միջոց կարի Օրինակ՝

1. spendeo «գոհաբերել» (հայ. սպանդ) բառը կարելի էր սկսել si վանկով և գրել si-pa-an-dl (-sipand, խեթերենում նույնպես նշանակում է «գոհաբերել»), որի ժամանակ շարտասանվող ձայնավորը հայտնվում էր միմյանց հաջորդող բաղաձայնների միջև:

2. Նույն բառը կարելի էր սկսել is վանկանշանով և գրել is-pa-an-da (-ispanđ), որի ժամանակ էլ շարտասանվող ձայնավորը կարող էր ընկնել բաղաձայններից առաջ:

Գրաֆիկայի հետ կապված այս պայմանականության գիտապցումը շատ կարևոր է հատկապես խեթա-հայկական բառային ընդհանրությունների համադրման ժամանակ, քանի որ, եթե սեպագրերի առանձնահատուկ գրության պատճառով բաղաձայնների միջև «հալոնվում» են ձայնավորներ, ապա հայերենին առանձնահատուկ գրությամբ էլ ու-ի հնչյունափոխված արմատական ձայնավորները չեն երևում՝ ստեղծելով բաղաձայնների կուտակման պատկեր. ինչպես՝ փուխր-փխր-ել, ձիգ>ձգ-ել, ծունր և դիր>ծնր-ա-գր և այլն: Եվ գրաֆիկայի հետ կապված միայն այս պայմանականությունների գիտակցումը թույլ է տալիս «նկատել» խեթա-հայկական շուրջ 30 նոր ընդհանրություններ, որոնք «վրիպել» են մինչև այժմ խեթա-հայկական բառային ընդհանրություններով զրազվող հեղափոխության ուղղությունից:

Այդ ընդհանրություններից ներկա հոդվածում կբնենք միայն հինգը՝ անտեսելով նրանց ծագման աղբյուրների հարցը և կանգ առնելով նախ՝ դրության մի ձևով և ապա՝ երկրորդ ձևով ավանդված ընդհանրությունների վրա:

KINIR—ՔՆԻՐ

Հիմք ընդունելով խեթական արձանագրություններում հայտնաբերված մի բառարանի տվյալները, Յ. Ֆրիդրիխը իր «Խեթերենի բառարանում» LU kinirtalla-ն ենթադրաբար (հարցականով) բացատրում է «երաժշտի տեսակ», «կիթառահար», իսկ նույն բառին համարժեք չուժերական LUNAR-ը, արաղական NARU-ն և ZAMARU-ն բացատրված են միայն «երգի»¹:

Այսպիսով, միևնույն բառը մերթ բացատրվում է իբրև «կիթառահար», մերթ «երաժիշտ», մերթ էլ «երգի»: Իսկ չե՞ն հակասում արդյոք այս բացատրությունները միմյանց: Փորձենք

¹ J. Friedrich, Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1950, 110 (այսուհետև կըր՝ ճատ՝ H. W.) և Kellschrifttexte aus Boghazköi I. 52 I 15 (այսուհետև կըճատ՝ KRo).

յիննի այդ բառերը հենց խոսքի մեջ՝ խեթական արձանագրություններից վերցված նախադասություններում:

LÚNAR hurilli SIR--RU² «Երգիչը խուսիներն է երգում»:

LÚNAR iŠ--TU GIŠŠA.A.TAR SIR--RU³ «Երգիչը GIŠŠA.A.TAR-ի հետ է երգում»:

LÚNAR GIŠhunzinarit SIR--RU⁴ «Երգիչը մեծ zinar-ով է երգում»:

Բերված օրինակները հաստատում են, որ LÚNAR-ը իրոք երգիչ է, որը երգում է մերթ միայնակ, մերթ երաժշտական զործիքների նվագակցությամբ (GIŠŠA.A.TAR. GIŠhunzinar): Հետևաբար, միանգամայն հիմնավոր կասկածներով, Բ. Ֆրիդրիխը չէր կարող մեխանիկորեն LÚkinirtalla-ն՝ «այդ kinirtalla-ն» նույնացնել շումերական LÚNAR-ին կամ արադական ZAMARU-ին:

Այժմ փորձենք պարզել այդ kinirtalla բառի կազմությունը: -talla վերջավորությամբ ըստ էության խեթերենում չատ կան, ինչպես՝ usk skitalla «հսկող» կամ «հսկի» (usk «հսկել» բայից), arsanatalla «սոխանող» (arsanu «սոխանել» բայից) և այլն⁵: Հետևաբար, եթե kinirtalla բառից էլ առանձնացնենք talla վերջածանցը, կմնա նրա սրմատը՝ kinir-ը:

Մեր կարծիքով, այդ բառը կարելի է համեմատել հայերենի քնար նույնպես երաժշտական զործիք նշանակող բառի հետ, իսկ LÚkinirtalla ամբողջական ձևն էլ հայերենի քնարաւոր կամ քնարաւոր հոմանիշների հետ, որոնց հիմքում նույնպես ընկած է քնար բառը:

Հայերենի «Առձեռն բառարանում» գտնում ենք այդ բառի հետևյալ բացատրությունը. «Քնար-նուագաւան քելերով՝ պլուպլս ձեւերով»⁶: Իսկ քնարաւոր և քնարաւոր հոմանիշները բացատրվում են հետևյալ կերպ. «Քնար՝ քարնոս, միանգամայն երգող»⁷, այսինքն՝ երգիչ, որ միաժամանակ նվագակցում է իրեն, երգիչ-քնարաւոր:

Եվ այսպես, հայերենը ոչ միայն ճշգրտում է խեթական արձանագրություններում հանդիպող բնական բառերի նշանակությունը, այլև լուծում է դրանց հոմանիշներ լինելու հարցը Այսինքն՝

այդ բառերը՝ LÚNAR, NARU, ZAMARU, LÚkinirtalla համարժեք են և դրանք պիտի ընկալել երգիչ-նվագողներ նշանակությամբ և ոչ թե միայն երգիչ կամ միայն նվագող ըմբռնմամբ: Խեթական տեքստերի մանրամասն ուսումնասիրությունից պարզվում է, որ այդ անվանումները տրվել են երկու մասնագիտություններ համատեղող, երկու դեր կատարող երաժիշտներին, մինչդեռ հակասություն է առաջանում այն ժամանակ, երբ այդ բառերը բացատրվում են միայն իրենց մեկ

նշանակությամբ՝ կամ երգիչ, կամ նվագողի: Տվյալ դեպքում LÚkinirtalla-ն, որ համարժեք է հայերենի քնարաւոր-երգիչին (կամ քնարաւոր-երգիչին), ավելի ճիշտ կլիներ թարգմանել հենց այդպես, քան թե անորոշ «երաժշտի տեսակ» կամ «կիրառաճար» բառերով: Միաժամանակ երգողի և նվագողի դերերով հանդես եկող երաժիշտը հին Հայաստանում արտահայտվում էր նաև մեկ բառով՝ գուսան (գուսանը համատեղում էր նաև երրորդ՝ հորինողի կամ երգահանի դերը նույնպես, որը սակայն հիմքեր չունենք տարածելու նաև Հին Արևելքի վերահիշյալ երաժիշտների վրա): Մ. Արեղյանը նշում է. «... Գուսան է կոչվել այն նվագածուն, որ միաժամանակ և՛ անգլ է, և՛ երգիչ»⁸:

Քնականաբար, երգող և միաժամանակ նվագող երաժիշտը իր երգին կարող էր նվագակցել միայն լարային կամ հարվածող գործիքներով, որը հաստատվում է նաև խեթական արձանագրություններից բերած մեր մեջբերումներով, որ LÚNAR-ը գուսանը իր երգին նվագակցում է GIŠŠA.A.TAR-ով, GIŠD.NIN-ով կամ hunzinar-ով, որոնցից և ոչ մեկը փողային գործիք չէ:

² Kellschrifturkunden aus Boghazköi XII II V 18, 23 (այսուհետև կրճատ՝ KUB).

³ KUB XXX 25 II 19-20.

⁴ KUB XXX 24 9-21.

⁵ J. Friedrich, Hethitische Elementarbuch, I. Heidelberg, 1960, 39 (այսուհետև հետև կրճատ՝ H. E.).

⁶ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 835 (այսուհետև կրճատ՝ ԱՔՀ), Այս համեմատությունը հնարավոր են համարել Ն. Մարտիրոսյանը («Նորք», 1924) և Գ. Ղափանցյանը (Chetto-armenlaca, էջ 68):

⁷ Նույն տեղում, էջ 836:

⁸ Մ. Արեղյան, Երկեր, հատ. Բ. Երևան, 1967, էջ 193:

Այնուամենայնիվ, թե՛ հայերեն, թե՛ խեթերեն տեքստերում բացաված չէ այն հանգամանքը, որ LUNAR-ը կամ գուցե օգտագործվեն միայն իրեն երգիչ կամ միայն իրեն նվագող նշանակություններով: Այսպես, օրինակ, Ասուվաժաշնի հայերեն օրինակում համարեն բնագրի երգիչ բառի դիմաց գտնում ենք գուսուն-ը:

Ինչպես հայտնի է, խեթական KUMU-ն ու հայկական ԲՆԱՐ-ը համարվում են փոխառություն սեմական աշխարհից՝ Երեւելենից⁹, ասուրեւեցից¹⁰: Սակայն, մեր կարծիքով, թե՛ խեթերենի, թե՛ հայերենի համար ակունքներն ավելի հին կարող են լինել, քան իրեն երաժշտական գործիք Հին Արևելքում հայտնի էր դեռևս անհիշելի ժամանակներից: Եթե ընդունենք, որ այն հայերի մեջ տարածվել ու մասսայականացել է միայն Ասուվաժաշնի թարգմանությունից՝ հետո՝ այնժան՝ «Երգեհոն», «Կիրառ» բառերը մնացին սոսկ զրքային փոխառություններ ու չմերվեցին մեր խոճիչո չէր լինի, քանի որ նույն այդ Ասուվաժաշնի միջոցով հայերենին անցած «ուրդան» կամ սակցական լեզվի մեջ: Մինչդեռ ԲՆԱՐ-ը, հայերենի ամենատարածված բառերից մեկը լինելուց բացի, նաև հայ մանրանկարչության ու զարդարվեստի անբաժան տարրն է մնում: Քնարը առկա է նաև սանսկրիտում՝ kinnara, արաբերենում՝ kinnarum ձևով¹¹, նրա առկայությունը և հնդկոպական լեզուներում, և սեմականներում ենթադրել է տալիս թերևս մեկ երրորդ ազդյուն:

ZINAR — ԶՆԱՐ

Խեթական սեպագիր արձանագրություններում հաճախ է հանդիպում նաև GIŠhunzinar բառը, որ 3. Ֆրիդրիխի «Խեթերենի բառարանում» բացատրված է «Ինչ-որ երաժշտական գործիք»¹²:

GIŠhunzinar բառը, ինչպես նշում են մասնագետները, իր կազմության մեջ է և կազմված է հետևյալ մասերից՝ hun և zinar: hun-ը խոսքերեն բառ է, որը նշանակում է «մեծ», hun-zinar, այսինքն՝ մեծ zinar: Սա ենթադրել է առաջին, որ գործածական են եղել այդ երաժշտական գործիքի նաև փոքր տարատեսակները: hunzinar-ը հանդիպում է գերադանդապես պաշտամունքային ու ծիսական տարադրություններին նվիրված արձանագրություններում: Ահա այդպիսի արարողություններից մի հատված, ուր արարողությունը ուղեկցվում է երգով ու hunzinar-ի նվագակցությամբ:

NINDA.KUR, RA-ma ŠA ŠA-TI SAL SU.GI da! nammaššan A-NA ALAM GIŠGIGIR ašanas šeir akuwanna pianzi nu dUTU-un ekuzi LUNAR GIŠhunzinarit SIRRU LUMES ALAM.KA.UD aha halzianzi meman-ma hustiskanzi LUKitaš U-UL halzai¹³.

«Իսկ իմաստուն կիներ 1 շատի հաստ հաց է վերցնում, իսկ հետո այն տալիս է կուռքին: Նստելու կուռքի վրայից խմիչք են տալիս, Արևի աստծու պատվին ըմպում են: Մեծ zinar-ով երգիչը երգում է: Երկրպագուն կանչում է «ահա», իսկ խոսքերը լռում են: Ազդարարը չի ձայնում»:

Ինչպես այս տեքստից է պարզվում, քնարահար-երգիչները հանդես են գալիս նաև zinar-ի նվագակցությամբ, որը հիմք է տալիս ենթադրելու այդ երկու նվագարանների միատեսակ լային-կամիթային կառուցվածք ունենալու մասին:

Մի շարք արձանագրություններում GIŠhunzinar-ի նշանակությամբ օգտագործվում է նաև GIŠd.NINGAL զաղափարագիրը, ինչպես՝

dUTU-un KU-in-na arhaian 1 — ŠU ekuzi LUNAR GIŠdN[IN].GAL SIR—RU LUMESALAM.KA.UD aha halzianzi¹⁴

«Մեկ անգամ նստած Արևի աստծու պատվին են ըմպում: LUNAR-ը երգում է (=նվագում է): Ազդարարն էլ «տիտ» են կանչում...»

Ոմանք հակված են այն կարծիքին, որ GIŠSA.A.TAK զաղափարագրի տակ ևս պետք է GIŠhunzinar-ը հասկանալ¹⁵:

⁹ J. Friedrich, H. W., 110.

¹⁰ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, Երևան, 1940, էջ 200.

¹¹ Bruno Meisner, Wolfram Von Soden, Akkadisches Handwörterbuch, I, 480.

¹² J. Friedrich, H. W., 75.

¹³ KUB XXX 24 II 7—11.

¹⁴ KUB XXX, 24, II, 20—21.

¹⁵ Otten, Hethitische Totenritualen, Berlin, 1958, 140 և E. Laroche, RHA 57 (1955) 73.

Հայ մատենագրության մեջ ևս բազմիցս հանդիպում ենք նաև ջնար երաժշտական գործիքի հիշատակությանը, որը մեր կարծիքով նույնական է խեթական ZINAR-ի հետ:

«Առձեռն բառարանում» ջնար բառի դիմաց գրված է. «Տե՛ս Բնար», այսինքն՝ ջնարը նույնացված է Բնարի հետ¹⁶:

Իսկ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն տալիս է հետևյալ բացատրությունը. «Ջնար-Բնար՝ պլսպլս յօրինուածով, տալիզ, նուագաւաճ՝ աղևոք կամ լարիւք կիրառ»¹⁷: «Այստեղ ևս չի տրված այդ նվագարանի հստակ պատկերացումը, այլ այն նույնացված է թե՛ տալիզի, թե՛ Բնարի, թե՛ կիրառի հետ:

Իսկ հասկանալի է, որովհետև այդ գործիքը հետագայում դուրս է եկել գործածությունից և որևէ մասին պատկերացում է կազմվում միայն մանրանկարիչների կամ մատենագիրների տվյալների միջոցով:

Այնուամենայնիվ, խիստ կասկածելի էր թվում այդ երկու գործիքների՝ Բնարի և ջնարի նույնացումը: Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» գրում է. «Ջնարը պետք է կարծել, թե Բնարի օկավիտությունը լինի, որովհետև ջնարն ու Բնարը երկուսը միասին կոչվ կոչվի գործածված ունին»¹⁸: Դրանով նա չի ընդունում Պ. Լազարյի և Մուս լեզվաբանների կարծիքը, որոնք հայկական ջնար բառը նույնպես բխցնում էին երբայական հնուցի:

Հ. Աճառյանը մեր միջնադարյան գրականությունից բերում է բազմաթիվ վկայություններ, ուր հիշատակվում են Բնարը, ջնարը և փողն ու երգեցողներ իրենց առանձին նվագարաններ. «Փողն և Բնարն և ջնարն»: «Ջնարով և Բնարիւք և որդնաւ»: «Ջնար, Բնար, տալիզ՝ բամբ շարժողին՝ Բաղգրածայնեալ»¹⁸:

Բացի այս փաստերից, կան և այլ ապացույցներ, որոնք վերջնականապես ցրում են այդ գործիքների նույնը չլինելու վերաբերյալ եղած կասկածները: Այսպես՝ ի տարբերություն հայերենի Բնարահար-Բնարաուր բառերի, մենք ունենք նաև վկայված ջնարաուր-ջնարահար ձևերը, որոնք նույնպես ապացույց են ջնարի՝ իրենց այլ նվագարանի գոյության¹⁹:

Ինչ վերաբերում է խեթերենի ZINAR և հայերենի ջնար ձևերի հնչյունական տարբերությանը, ապա դրանք լիովին համապատասխանում են: Որ խեթերենի Z-ի տակ գտնում ենք հայերենում ով սկսվող բառերը, ապացուցում է նաև խեթա-հայկական բառային մեկ այլ զուգահեռություն, ինչպես՝ խեթ. ZAHH-IJA — ջախ-էլ, ջախջախ-եղ²⁰:

Մեզ թվում է, որ բոլոր հիմքերը կան ենթադրելու խեթական ZINAR-ի և հայկական ջնարի նույնության մասին, հայերենը ճշգրտում է նաև Յ. Ֆրիդրիխի ենթադրած «մի նվագարանի»՝ hunzinar-ի կամ GIS.dNIN.GAL-ի ինչպիսի երաժշտական գործիք լինելը:

PURUT — ԲՐՈՒՅ

Խեթական արձանագրություններում հանդիպող purut բառը Յ. Ֆրիդրիխի «խեթերենի բառարանում» բացատրված է հետևյալ հոմանիշներով. «Կավ, ծեփ, սվաղ, ցեխ»²¹: Իրեն այդ purut վանկադրին համարժեք խեթական տեքստերում օգտագործվում է նաև IM²² գաղափարագիրը, որը նույնպես ունի «կավ, ցեխ» նշանակությունները: Մենք կրեքենք մի հատված, ուր նույն տեքստում մերթ օգտագործվում է purut-ը, մերթ՝ IM գաղափարագիրը:

¹⁶ ԱԲՀՀ, 706:

¹⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1843, II, 674 (այսուհետև կրճատ՝ ՆԲՀՀ):

¹⁸ Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. V, էջ 1222: Չնայած Հ. Աճառյանի այս հիմնավորմանը, որ քնարը և ջնարը նույնական չեն, Գ. Ջահուկյանը իր «Очерки по истории дописьменного периода армянского языка» գրքում (304 էջ) դարձյալ հնարավոր է համարում ԿԵ-ի հնչյունական անցումը հայերենի համար այն դեպքում, երբ այդ օրինակաբանությունը ներկայացնում է միայն մեկ բառ:

¹⁹ ԱԲՀՀ, էջ 706:

²⁰ Գ. Ղափանյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 193:

²¹ J. Friedrich, H. W., 174.

²² Նույն տեղում, էջ 277:

namma wappus IM-an dai nammaš šakuntja ekuzi nu I NINDA.SIG paršija naaš-šakuntjaš purut dai²³.

«Հետո փոսից կավը վերցնում են, հետո աղբյուրից էլ ըմպում, բարակ հացը կտրտում են և առն աղբյուրի կավի վրա են դնում»:

Այս հատվածը վերցված է կավի աստծու պատվին կատարվող մի արարողության նկարագրությունից, ուր վանկադիք purut-ի փոխարեն օգտագործվող IM զաղափարագիրը ավելի վստահելի է հարձնում purut-ի կավ նշանակությամբ գործածվելը:

Կավի տարբեր հատկությունները հայտնի էին նաև հին ժողովուրդներին, ուստի զարմանալի չէ, որ մենք արձանագրություններում հանդիպում ենք purut-ն իբրև օճառ, շինանյութ կամ սվաղ գործածվող նյութի անուն: Ահա մի հատված, ուր տաճարի շինարարության համար անհրաժեշտ շինանյութերի հետ թվարկվում է նաև purut-ը.

purut-ma DINGIR²⁴ watarnahzi²⁴

«Իսկ կավը աստվածներն են պատվիրում»:

Մեկ այլ հատվածում երևում է կավի գործածությունն իբրև օճառ.

nu wappuwas IM dai naan purpuran ljanzi naan-kan A-NA LUGAL SAL.LUGAL EHI.A humanda KI.MIN²⁵

«Եվ փոսից կավ են վերցնում. փրփուր սառնում, քաղափուրի, քաղուհու սենյակներն ամբողջ նույնն են (անում)»:

Մեր կարծիքով խեթերենի purut-ը նույնական է հայերենի բրուտ բառին:

Ինչպես գիտենք, հայերենում արհեստներ ցույց տվող զոյականներից շատերը կազմվում են զործ կամ առաւ բառերի օգնությամբ, ինչպես՝ երկաթագործ, հացագործ, գորգագործ և այլն կամ՝ լվացաւաւ, ներկաւաւ, շինաւաւ և այլն: Սակայն հայերենին խորթ չէ նաև միայն արմատական կազմությամբ արհեստներ ցույց տվող բառերի օգտագործումը, ինչպես՝ հյուսն, նոն, ջուլհակ և այլն: Թեև զրական հայերենում ու նրա շատ բարբառներում զուգահեռաբար իբրև հոմանիշներ գործածվում են թե՛ բրուտ-ը, թե՛ բրուտագործ-ը (մի շարք բարբառներում՝ բուրուտջի, պուրուտջի). սակայն ավելի լայն տարածում է ունեցել մեր լեզվում բրուտ ձևը երկու հիմնական պատճառներով. նախ՝ հայերենում բրուտ բառի մեջ հետազայում մթազնել է կավ իմաստը և այն առանձին կավ նշանակությամբ չի օգտագործվում և երկրորդ բրուտ ավելի կարճ է, քան բրուտագործ և այդ ձևերում գիտակցվում է միայն կավեղեն. խեցեղեն ամաններ շինողը, ինչպես և բացատրվում են այդ բառերը հայերեն բառարաններում:

Այնուամենայնիվ, կավ նշանակությամբ purut արմատը մենք պահպանված ենք գտնում հայերենի մի շարք բարբառներում, ուր խեցեղենի կավո կամ ամանեղեն պատրաստելու կավը կոչվում է բրտին: Ահա թե ինչպես է բացատրված այդ բառը Հ. Աճառյանի «Գավառական բառարանում». «Բրտին՝ կարմիր հող մ'է որմէ բրուտը ամաններ կպատրաստւի»²⁶:

Այստեղից պարզ է դառնում, որ հայերենում բրտին կամ բրուտ բառերը նշանակում էին կավի հատուկ տեսակ և ոչ ընդհանրապես կավ, մանավանդ որ թե՛ հայերենում, թե՛ խեթերենում գելա. տիղմ. շաղախ նշանակությամբ գործածական են և այլ հոմանիշներ:

Հայերենի բրուտ բառի ծագման վերաբերյալ հայտնվել են տարբեր և իրարամերձ կարծիքներ: Չրինակ, «Բառգիրք նոր հայկազեան լեզուի» բառարանի հեղինակները այդ բառի առաջացումը կապում են հայերենի բր-ել «փորել» նշանակության հետ. «Բրուտ-կալագործ, որ (ի՛) բրտծէ հողը» կազմէ անօրս խեցեղէնս»²⁷:

Ն. Յա. Մառը այն կապում է վրացերենի բրուցա «կույր» բառի, իսկ Հյունքյարպեյենտյանը՝ հայերենի բիւրտ «կուպիտ», «կոշտ» արմատների հետ²⁸:

Հայկական կավի բարձրորակ տեսակները հայտնի են եղել Հայաստանի սահմաններից դուրս անհիշելի ժամանակներից. դրանք կոչվել են «տիլ էրմանի», «կիլ էրմանի», „Bolus armenius“, „Βολος αρμενικ“ և այլն²⁹:

²³ KUB XII. 58, 1 9—10.

²⁴ KUB II. 2 1 42.

²⁵ KBo IV, 2 1 48—49.

²⁶ Հ. Աճառյան, ԳԲ, 212.

²⁷ ՆԲՀԼ, I, 519.

²⁸ Հ. Աճառյան, Արմ. բառ., հ. I, էջ 1230.

²⁹ Կ. Ղաֆադարյան, Ալբիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940, էջ 142.

XII դարի արար աշխարհագիր Իդրիսին վկայակոչում է, որ Հայաստանի լճերից մեկի անունը հանվում էր կավի ընտիր մի տեսակ, որից պատրաստված կժերը բարձր զննելով վաճառվում էին Մերձավոր Արևելքի երկրներում³⁰։

Այս վկայությունը կարևոր է նաև մեկ այլ տեսանկյունից. այն պարզում է մի գաղտնիք ևս. ինչու էին խեթերը կավի աստվածներին նվիրված արարողությունները կատարում ջրերի, աղբյուրների կամ գետերի ափին։ Որովհետև ջուրն էր ցույց տալիս մարդկանց կավահանքերի տեղը։ Այս մի հատված կավի աստվածների պատվին կատարվող արարողությունից, որը տեղի է ունենում ջրի ափին.

naš mahhan wappul ari nu l NINDA.SIG wappuwas dMAH paršija
natšan wappul dai NINDA.E.LA.A memal šeir ishuwai
nu GESTIN sipanti nu memal
wappuwas dMAH-aš kaša EGIR-pa tug uwanun nu-kan kaš-IM-as
kuelz wappuwaz danza nu zik wappuwas dMAH duel
ŠU.TI-KA daa nu kuun EN.SISKUR apteiz šapijai nan 12 UZU-ls
parkunut namma wappuaš IM-an dai nammaš šakunija
ekuzi nu l NINDA.SIG paršija nat šakunijas purut dai
[.]-a memal suhḫai GEŠTIN sipanti nu memal
[.] mahhan šakuis MI-az KI-az purut EGIR sara
šakunieskiši nu edani antuḫsi A-NA EN.SISKUR IŠ-TU GIS parasu
idalu papratar arha QA.TAM.MA mugai namma šakunijas
IM-an dai kueid maanma SAL ŠU-GI KI-e daskizzi EGIR-an massan
apl pīran GIŠZA.LAM.GARHI A ŠA GI karuljanta ijanzima
kuwappi nu kuwappi haršauwar maninkuwan NU.GAL
[.] U-UL aranza nu GIŠZA.LAM.GAR aplja ijanza³¹
wappuwaš IM-an šakunijašša IM-an aplja pīdai

«Երբ կավափոսին են հասնում, մեկ բարակ հաց են փշրում՝ կավափոսի Տեղ աստվածուհու (պատվին)։

Իրանք կավափոսի մեջ են դնում, ճարպահաց, աղանձ են շաղ տալիս, գինի են ղոհաբերում և ասում.

— Կավափոսի Մայր աստվածուհի, ահա քեզ մոտ եմ եկել, տես կավը այս կավահանքից վերցված և դու կավահանքի Մայր, քո

ձեռքը վերցրու։ Այս ղոհաբերողին սրանով կմաքրեմ՝ 12 ճարպով կսրբեմ։ Հետո կավափոսի կավը վերցնում են, հետո աղբյուրի (ջուր) էն խմում, բարակ հաց են կտրատում, այն աղբյուրի կավին են դնում, (հետո) աղանձ են լցնում, գինի են հեղում ու ասում.

.....երբ աղբյուրը պղտոր է՝ գետնից կավ է դուրս ցայտում։ Այդ մարդու՝ ղոհաբերողի, չարիքը, կեղտոտությունը թող դուրս մոզվի նույնպես։ Հետո աղբյուրի կավը վերցնում են։ Իսկ երբ սրանք իմաստուն կիներ վերցնում է, հետո էլ ափի եզրին վրանները՝ վաղօրոք եղեղից պատրաստված.

երբեք փորվածքը նվազեցնել չի կարելի։չբերված վրանն այնտեղ սարքում են.

կավահանքի կավը, աղբյուրի կավը այնտեղ են տեղադրում»։

Այս արարողությունից ականերն է դառնում այն փաստը, որ խեթերին նույնպես ծանոթ են եղել գետափերի կամ լճերի հատակներից հանվող կավի բրուտազործական բարձր հատկությունները։ Այդպիսի վայրերից հանված կավն ուներ մի շարք առավելություններ, որովհետև գերծ էր խճից, քարերից և մազելու կամ զտելու, ավելորդ մշակման կարիք չուներ։

Միաժամանակ, այս արարողության ժամանակ կավը վերցնող «իմաստուն կիներ» մարմնավորում է կավից ամաններ պատրաստող արհեստավորին՝ բրուտին, որը ներկայացված է SAL ŠU.GI «իմաստուն կին», «իմաստուն պառավ» գաղափարագրով։ Այսպես էին բնութագրվում ոչ միայն մոզերն ու հմայողները, այլև հմուտ արհեստավորները։ Հայ հին գրականության մեջ

³⁰ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 303։

³¹ KUB XII 58 I 3—19.

նույնպես վկայում են իմաստուն և իմաստունի բառերն իբրեւ հոմանիշներ նախադասությունների ու փոխադրումների օրինակ՝ «Այր իմաստուն՝ որ գիտիցէ քանդակել զքանդակս ընդ իմաստունս իմ»³², Վերոհիշյալ արարողության մեջ հիշատակվող կավի աստվածության մարմնավորումը կնոջ կերպարով՝ արդյունք է իրական պատմական արտացոլման. չէ՞ որ հայերի մոտ ևս (ինչպես և շատ այլ ժողովուրդներ) բրուտազործությամբ զբաղվել են հիմնականում կանայք: Վերոհիշյալ արձանագրությունը հիմնականում Լեզի է կանացի մասնագիտություն:

ZAP-ija — ԾՈՒՊ-ել (= ԾՓել)

Խեթերենում zap արմատից կազմված կան և՛ չեզոք՝ zapija «կարել, ցայտել», և՛ ներգործական սեռի՝ zapanu «կարեցնել, ցայտեցնել» բայեր³³:

Բարեբախտաբար, կան անվնաս բազմաթիվ նախադասություններ, ուր ավելի ցայտուն են երևում այդ բայերի նշանակությունները. բերենք մի քանի հատված այդպիսի արձանագրություններից.

nu kan man SAL.LUGAL kuitki wetumar EGIR-an eešzi

nu kan apat para šanhanzi daganzipuš-ma tattaranzi

šuhhus zappijaz pahšanuwanzi³⁴

«Իրե քաղաքում պատկանող որևէ երկրորդական կառույց կա, այն մաքրում են, հատակն էլ ծեփում են

տանիքը կարելուց պահպանում են»:

SARHI.A-ma human kuaškuaszi šeiraššan harnamma DUG-is

IŠ-TU KAS harnamma lahhuwai nai anda imijazzi wahhiesnaššan

watar šeir tepu zappanuzzi³⁵

«Իսկ կանաչիները բոլոր ծեծում են, վրան խառնիչից զարեջուր են խառնած լցնում և միմյանց են միացնում, միշտ եռացրած ջուր են վրան ցանում»:

Նույնպիսի՝ ներգործական իմաստով է գործածված այդ բայը նաև այս հատվածում.

A-NA GEŠTIN zapanuzzi³⁶

«Գիժուց են շաղ տալիս» և այլն:

Ի՞նչ վերոհիշյալ բայական ձևերի դիմային վերջավորություններն ու բայածանցներն անշատենք, կատանանք նրա արմատը, որ կլինի zap:

Այս բայարմատը, կարծում ենք, կարելի է համեմատել հայերենի ծփ կամ ծուփ արմատների հետ, որոնցից նույնպես ունենք կազմված չեզոք կամ ներգործական սեռի բայեր, ինչպես՝ ծփալ, ծփել, ծփիլ, ծփեցուցանել և այլն:

Այս բայը տարածված է հայերենի գրեթե բոլոր բարբառներում, սակայն և սոսկածանցի ձևավորմամբ. որի պատճառով արտասանվում է ցփն-ել կամ ցպն-ել. սա, իր պատճառական-ներգործական իմաստով, նշտիլ համապատասխանում է խեթերենի zapnu ձևին, Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան» զրբում այս բայը բացատրված է հետևյալ կերպ. «Ցփնել-ցրուել, շաղ տալ, սրսնել», «Չուր ցփնել»³⁷ և այլն:

Հ. Ահառյանի «Գավառական բառարանում» գտնում ենք այդ բայի գործածության օրինակներ, ինչպես՝ «Իլիին վաղը ցփնեցին», «Ցփնած մազեր» և այլն: Այստեղ ցփնել-ը բացատրված է. «ցանել ցրուել. սփռել» բառերով³⁸:

Նոր հայկազյան բառարանում թեև չեն նշվում այդ բայի ունեցած կարեցնել, ցայտեցնել իմաստները, սակայն այնտեղ բերված օրինակներում առկա են նաև այդ նշանակությունները, օրինակ.

³² ԱՔՀԼ, 340 և ՆՔՀԼ, 850:

³³ J. Friedrich, H. W., 259—260.

³⁴ KUB IX 15 III 10—14

³⁵ KUB VII 1 I 25—28.

³⁶ KUB IX, 6 I 38.

³⁷ Ս. Ա մ ա տ ու ն ի, ՀՐՐ, 646:

³⁸ Հ. Ա ճ ա ո յ ա ն, ԳՐ, 1059:

«Միփեսայ զթուրս կարմիր ծովուն ի վերայ երեսայ նոցա», կամ՝ «Արպարտուրին ծփեցուցանէ»³⁹ և այլն:

Եվ այս, և մեր դասական մատենագրությունից վերցված բազմաթիվ օրինակներում հայերենի ծուպ-ծուփ արմատից կազմված բայերն իրենց նշանակությամբ (նույնպես և բարբառային զվեճ, զփեճ ձևերը) նույնանում են խեթերենի zardja, zardu ձևերի հետ, միաժամանակ ցույց տալով խեթական շ նշանի տակ մի քանի նշյունների առկայությունը: Որ խեթական շ նշանի միջոցով արտահայտվում էին մի քանի նշյուններ, ապացուցվում է այլ օրինակներով ևս, ինչպես՝ աքառական KUZZI «ցուրտ» բառը խեթական արձանագրություններում գրվում էր kuZZi⁴⁰:

Երկբաղաձայն սկիզբ ունեցող բառերի դրության երկրորդ միջոցն ավելի սահմանափակ բնույթ էր կրում, որովհետև այն կարելի էր կիրառել միայն սահմանափակ թվով բառերի նկատմամբ՝ հատկապես այն բառերի, որոնք սկսվում էին sk, sp, st կապակցություններով՝ անկախ այն բանից, ծագումնաբանորեն հնդեվրոպական են, թե փոխառյալ:

Գրության այս երկրորդ միջոցով, երբ հավելյալ 1 կարճ ձայնավորը հայտնվում էր բառասկզբին, բառը համարյա չէր փոփոխվում: Մինչդեռ առաջին միջոցով գրելիս բաղաձայնների միջև հայտնվում էին և՛ i-ն, և՛ u-ն, և՛ a-ն, և՛ e-ն:

Բառասկզբի sk, sp, st կապակցությունները խեթերենում վեր էին ածվում isk, isp, ist-ի, իսկ հայերենում համապատասխանորեն՝ սկ, սպ, ստ-ի: Օրինակ, հնդեվրոպական skel «ծեղքելը» խեթերենում գրվում էր iškal-ai, իսկ հայերենում՝ սկալել, spendeo «սպանդել» խեթերենում գրվում էր išpand, հայերենում՝ սպանդ, ինչպես նաև խեթերենի išpar-ai «հայերենի սպուռ կամ սփիւռ ձևերը, որ նույնիմաստ են մենք կարծում ենք նույնն են նաև ծագումնաբանորեն, որ բննկու ենք ստոր»⁴¹:

IŠPAR – ՈՊԻԻԻ (ՈՓԻԻԻ)

Բոլոր խեթագետների կողմից խեթերենի išpar բառն ընկալվում է «տառածել, սփռել, ձգել» նշանակություններով, ինչպես և այն ներկայացնում է Զ. Ֆրիդրիխը բառարանում⁴²: Ահա մի քանի հատվածներ, որոնց միջոցով կարելի է ստուգել խեթո առարկա առի նշանակությունները.

nu Gišlahurnuzzi išparanzi nuššan 3 NINĜA.KUR₄RA Gišlahurnuzzi [. . .] šeirtianzi⁴³

«Ջահասեղանը տարածում են, 3 հասարակաց ղոհասեղանի [. . .] վրա են դնում»:

kue TUGBAR.TEMES₃nasma TUG GU.UD.DU.A šeirt kitta nušši apija kattan išparanzi⁴⁴

«Այս երկար վերարկուները և շապիկները նրանց վրա են ձգում»:

TUG-an uesta ispala KU.BABBAR-i išparan harzi⁴⁵

«Ջղեստը հագած, արծաթյա նիզակը պարզած են պահում»:

Išpar-ը ոչ միայն արտաքին ձևով (հնդեվրոպանորեն), այլև իր բոլոր նշանակություններով նույնանում է հայերենի սպառ, սփռու կամ սփռ-ել բայական ձևի հետ: Սպուռ կամ սփռել ձևերը հայերենում բացատրվում են «տառածել, ծալել, պարզել, ցրտել, ցանել, սերմանել, այլև ընդարձակել» նշանակություններով: Ավելորդ չենք համարում ստուգել այդ նշանակություններից

³⁹ ՆՔՀԼ, I, 1029:

⁴⁰ J. Friedrich, H. W., 309.

⁴¹ Գրությամբ այս խմբի ընդհանրություններից սկալ-ել-iskal-ai սպանդ-ispand սպրդ-ել-ispard-ի մասին մենք չենք խոսի, քանի որ դրանք մեզանից առաջ մատնանշել է ու քննել Ք. Ղափանցյանը (տե՛ս Հայոց լեզվի պատմություն, էջ 198—200):

⁴² J. Friedrich, H. W., 89—90.

⁴³ KUB, IX, 31 17—19.

⁴⁴ KUB, VII, 8 III 16—19.

⁴⁵ KUB, IX, 28 I 15.

հիմնականները հայ հին մատենագրությունից վերցված տեքստերում, ինչպես՝ «Եթե սփռեցի ընդ սուրբն պղծեսցէ զնոսա քահանայն»։ «Սփռեցիլ ի վերա նորա զվարմ իմ»⁴⁶ և այլն։

Հայերենի սպուտ (կամ սփիւռ, սփուտ) բառի ծագման վերաբերյալ եղած կտրժիթները բազմաթիվ են ու իրարամերձ։ Նոր հայկազեան բառարանը այս բառի առաջացումը կապում է հայերեն փռել ձեռի հետ, որից առաջ հայտնվել է ս սաստկականը։

Նույն տեղում բառը համեմատված է նաև հունարենի սփիոս, սփոռա, թուրքերենի սնրփմե⁴⁷ ձևերի հետ։ Թիւրքայնը սպուտ-ը կապում է պարսկական սփիթ «տիեզերք» բառի հետ, Մենեհյանը՝ հունարեն ֆուրիո «ցրվել, խառնել, տարածել», Տերվիշյանը հնիւ. sput «ցրել» և սանսկրիտի sphur ձևերի հետ, իսկ Մեյնը՝ փարսուտ և սանսկրիտի «արձակել, թռթռափել» ձևերի հետ⁴⁸։

Մեզ թվում է, որ խեթա-հայկական այս զուգահեռը նույնպես, ինչպես նաև վերոհիշյալ sk, sd, st կապակցությունների խեթերենում isk, isp, ist, իսկ հայերենում՝ սկ, սպ, ստ կապակցություններով տառադարձվելու օրինաչափական լինելը, հիմք են տալիս մերժելու այլևայլ կարծիքները և ընդունելու միայն այն փաստը, որ հայերենի սպուտ և խեթերենի ispat-ը ծագումնաբանորեն կարող են լինել հնդեվրոպական միևնույն աղբյուրից։

⁴⁶ ՆԲՀԷ, 732, 742 և ՍԲՀԷ, ԽԽԹ. ispat բայի հետ Գ. Ղափանցյանը փորձում է կապել հայերենի սպառ-ևմ-ը, որ թեև նման է հնչյունապես, սակայն նշանակությամբ բոլորովին այլ է (տե՛ս Գ. Капанцян. Chetio-armeniaca, էջ 118)։

⁴⁷ ՆԲՀԷ։

⁴⁸ Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. V։